

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67
Ե 540

**ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**ՆՎԻՐՎՈՒՄ Է Ա. ԵՍԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ
100-ԱՄՅԱԿԻՆ**

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը
Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան

Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբուզյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Վ.Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Զոչարյան

Ե 540 ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսա-
կան կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝
Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2015.–208 էջ:

Ժողովածուն ամփոփում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2014թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած գիտաժողովի նյութերը՝ նվիրված ականավոր իրավաբան Աղասի Եսայանի ծննդյան 100-ամյակին:

Այն ընդգրկում է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի վերաբերյալ գիտական աշխատանքներ, որոնք աչքի են ընկնում բարձրացված հարցերի արդիանա-
կությամբ, տեսական խորը վերլուծություններով և գործնական նշանակու-
թյամբ: Ժողովածուի մեջ տեղ են գտել ինչպես ճանաչված գիտնականների, այն-
պես էլ երիտասարդ դասախոսների ու ասպիրանտների աշխատանքները: Կա-
րող է օգտակար լինել իրավաբան տեսաբանների, իրավաստեղծ և իրավակի-
րառ մարմինների ներկայացուցիչներին, իրավունքի տարբեր հարցերով հե-
տաքրքրվողներին:

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67

ISBN 978-5-8084-1933-9

© ԵՊՀ հրատ., 2015
© Հեղ. խումբ, 2015

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վիզեն Քոչարյան

“PERINCEK V. SWITZERLAND” գործով ՄԱԲԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 ՎՃՈՒ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ5

Լևոն Գևորգյան

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ԶԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ ՉԻՐԱԳՈՎՆ
ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ18

Անի Միմոնյան

ԶԱՐԳԱՅՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ25

Արթուր Վաղարշյան

ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ35

Տարոն Միմոնյան

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԴՐԱՆՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ՈՐՈՇ ՕՐԻՆԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ56

Ալվարո Ալեքսանյան

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԱՅԱՑՔՆԵՐԸ68

Նարինե Դավթյան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԻ ՓՈԽԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ87

Գևորգ Դանիելյան

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ98

Վարդան Այվազյան

ԿՈՆՍՏԻՏՈՒՅԻՆՆԱԼԻԶՄԻ (ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 124

Անահիտ Մանասյան

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 140

Արա Գաբուզյան

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԱՂԲՅՈՒՐ 149

Սամվել Դիրանյան

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 160

Аида Искоян

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ЭКОЛОГИЧЕСКОГО ПРАВА:
МЕЖДУНАРОДНЫЕ И НАЦИОНАЛЬНЫЕ ПРЕДПОСЫЛКИ 174

Գրիգոր Բեքմեզյան

ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ
ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ 190

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Անի Միմոնյան

ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս

Զարգացման բնականոն ընթացքը միջազգային հանրության առջև ծառայած առավել կարևոր խնդիրներից է, որի լուծման արդյունավետությունից է կախված մարդկության հետագա առաջընթացը: Միջազգային հանրությունը հանգել է այն եզրակացության, որ ամբողջ աշխարհի, բոլոր պետությունների համամասնորեն և համընդհանուր զարգացումը չունի այլընտրանք: «The Economist» անգլիական հեղինակավոր ամսագրին տված հարցազույցում, խոսելով աղքատության մեջ գտնվող պետություններին տրամադրվող ոչ բավարար օժանդակության մասին, ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման նշել է, որ աղքատությունը, սոցիալական ծանր պայմանները, քաղաքական հետամնացությունը ծնում են հակամարտություններ և խթանում են միջազգային հանցագործությունների աճը:¹

Այս տեսակետը կիսել է նաև ԱՄՆ պետքարտուղարը՝ զարգացման իրավունքի արդյունավետ իրականացումը համարելով ԱՄՆ-ի ազգային անվտանգության անբաժան գործոն:

Զարգացման իրավունքի հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությունը միջազգային իրավունքի հարթակում սկսվել է անցած դարի վաթսուհին թվականների կեսերից: Այդ ժամանակ զարգացման իրավունքը դարձել է քաղաքական խիստ բանավեճերի, վիճաբանությունների և քննարկումների առարկա²:

Զարգացման իրավունքի անուղղակի տարրեր կարելի է նկատել դեռևս Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության

րության մեջ (ընդունված 1945 թվականին)¹ և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (ընդունված 1948 թվականին):² Մակայն պատմականորեն զարգացման իրավունքի առաջացումն ընդունված է կապել գաղութային համակարգի փլուզման և մի շարք երկրների անկախության ձեռքբերման հետ:³

Ի սկզբանե միջազգային հարաբերություններում զարգացման իրավունքն առաջացել է տնտեսական հարաբերությունների համատեքստում: Ավելի կոնկրետ, զարգացման իրավունքը ի սկզբանե վերաբերում էր միայն պետությունների միջև առաջացած տնտեսական հարաբերություններին: Միջազգային հանրության որոշ ներկայացուցիչների (մեծամասամբ գաղութային համակարգից նոր անկախացած երկրներ) տնտեսությունը ծայրաստիճան թերզարգացած էր, և տնտեսությունը ճգնաժամային վիճակից դուրս բերելու համար անհրաժեշտ էր վերակառուցել միջազգային տնտեսական հարաբերությունների ողջ համակարգը: Նշված իրավիճակը այն դրդապատճառն էր, որը սկիզբ դրեց իրավական նոր նորմերի,

¹ ՄԱԿ-ի կանոնադրությունը պարունակում է միջազգային պարտավորություններ, մասնավորապես՝ Հոդված 1(3)-ում նախատեսված է իրականացնել միջազգային համագործակցություն տնտեսական, սոցիալական, մշակութային կամ մարդասիրական բնույթի միջազգային խնդիրների լուծման, ինչպես նաև բոլորի համար մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի տարածման և խրախուսման գործում՝ անկախ սեռից, լեզվից կամ դավանանքից, ՄԱԿ-ը պետք է նպաստի միջազգային տնտեսական, սոցիալական, առողջապահական և համանման հարցերի լուծմանը, մշակույթի ու կրթության բնագավառներում միջազգային համագործակցությանը (Հոդված 55-րդ) և վերջապես ՄԱԿ-ի բոլոր անդամները պարտավորվում են 55-րդ հոդվածում նշված նպատակներին հասնելու համար ձեռնարկել համատն և ինքնուրույն գործողություններ՝ կազմակերպության հետ համագործակցելով (Հոդված 56-րդ):

² Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 28-րդ հոդվածում նշված է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի սոցիալական բարօրության, որի պարագայում մարդու բոլոր իրավունքները կարող են լիարժեք իրականացվել:

³ Ania Lindroos The right to development, Helsinki 1999, p. 3:

¹ Տե՛ս The Economist 18 December 2010 vol. 397, number 8713, p. 18:

² Տե՛ս Stephen P. Marks, The right to development A primer, Harvard University 2004, p. 16:

սկզբունքների և հայեցակարգերի մշակմանը, որոնց թվում էր նաև զարգացման իրավունքը: Հետագայում զարգացման գործընթացի իրականացման շրջանակներն ավելի ընդլայնվեցին և տնտեսական հարաբերություններից զատ տարածվեցին նաև սոցիալական, քաղաքական, մշակութային և գիտական ոլորտների վրա:

Զարգացման միտքը սկսեց ամրագրվել միջազգային կազմակերպությունների բանաձևերում, որոշումներում, նրանց կողմից կազմակերպված միջազգային կոնֆերանսների վերլուծական նյութերում:

Նշված միջազգային կազմակերպություններից առաջիններից էր Միավորված ազգերի կազմակերպությունը (այսուհետ նաև՝ ՄԱԿ): Իրավագիտության տեսության մեջ զարգացման իրավունքի առաջացումը համարվում է ՄԱԿ-ի և նրա մարմինների գործունեության արդյունք: Զարգացման իրավունքը ձևավորվել է ՄԱԿ-ի կառույցներում քննարկումների, նրանց կողմից կատարված հարցումների և բանաձևերի ու այլ իրավաբանական փաստաթղթերի ընդունման արդյունքում և միջոցով: Միջազգային իրավական այդ փաստաթղթերի շարքում առանցքային տեղ են զբաղեցնում «Զարգացման իրավունքի մասին» ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 41/128 բանաձևը, ՄԱԿ-ի Հազարամյակի մարտահրավերները, Զարգացման իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիան, «Միջազգային առևտուրը՝ որպես տնտեսական զարգացման կարևորագույն միջոց» թիվ 1707 բանաձևը, «Միջազգային առևտրային հարաբերությունների և քաղաքականության բնորոշման և զարգացմանը նպաստող սկզբունքները», «Զարգացումը և միջազգային տնտեսական համագործակցությունը» ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևը և այլն: Այս միջազգային իրավական փաստաթղթերում և մասնավորապես թվականի զարգացման իրավունքի մասին հռչակագրում պարզաբանվում են զարգացման իրավունքին վերաբերող հիմնական հասկացությունները, վերհանվում են զարգացման իրավունքի նորմատիվ իրավական բովանդակության հետ առնչվող մի

շարք հասկացություններ: Չնայած նրան, որ «Զարգացման իրավունքի մասին» 1986 թվականի հռչակագիրը առաջին հայացքից կարգավորման է ենթարկում զարգացման գործընթացի իրավական ասպեկտները, սակայն քիչ չեն պարզաբանման ենթակա հակասական դրույթները:

Մասնավորապես՝

- զարգացման իրավունքն անհատի՞, թե՞ կոլեկտիվ իրավունք է,
- ո՞վքեր են զարգացման իրավունքի շահառուները, բենեֆիցիարները,
- արդյոք զարգացման իրավունքը կրում է պարտադիր իրավաբանական բնույթ,
- արդյոք զարգացման իրավունքի իրականացմանը խոչընդոտելու համար պետությունները կարող են ենթարկվել պատասխանատվության և վերջապես
- ի՞նչ մեխանիզմներով և ճանապարհներով կարող է իրականացվել պետությունների, ժողովուրդների և անհատների զարգացման իրավունքը:

Սույն վերլուծության մեջ մանրամասն կանդրադառնանք վերջին հարցադրմանը:

«Զարգացման իրավունքի մասին» 1986 թվականի հռչակագրի ընդունումից ի վեր միջազգայնագետների և իրավագետների միջև ծավալվեցին բազմաթիվ բանավեճեր զարգացման իրավունքի իրականացման ձևերի, իրավական եղանակների արդյունավետության վերաբերյալ: Մասնավորապես՝ անգլիացի հայտնի իրավագետ Ի-զաբելյա Բաննը իր՝ «Զարգացման իրավունքը և միջազգային տնտեսական իրավունքը» վերատառությամբ աշխատության մեջ անհանգստություն է հայտնել զարգացման իրավունքի իրականացման հստակ, համակարգված և, որն առավել կարևոր է, միասնական մի-

ջազգային քաղաքականության բացակայության կապակցությամբ:¹ Պրոֆեսոր Բաննը մտահոգություն է հայտնել, որ զարգացած տնտեսություն ունեցող գերտերությունները, փորձելով օգտագործել այդ իրողությունը, հնարավորություն են ստանում շահարկել թույլ զարգացած տնտեսություն ունեցող պետությունների օժանդակության հնարավորությունները այդ երկրների վրա քաղաքական ազդեցությունն ընդլայնելու համար:

Ազգությամբ պակիստանցի մեկ այլ հայտնի իրավագետ Խուր-շիդ Իքբալը, իր՝ «Ջարգացման իրավունքը միջազգային իրավունքում» աշխատության մեջ զարգացման իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովելու համար պայմանականորեն այդ գործընթացը բաժանում է երկու մակարդակների՝ ներպետական և միջազգային: Հայտնի իրավագետը մատնանշում է, որ չափազանց կարևոր է զարգացող պետությունների կառավարությունների կողմից զարգացման իրավունքի իրականացման ազգային հստակ ծրագրերի առկայություն: Յուրաքանչյուր պետություն պարտավոր է մշակել իր պետական շահերի առաջնահերթությանը համապատասխան ծրագիր և հնարավորություն ստանա ինքնուրույն որոշել այն տնտեսական և քաղաքական ուղղությունները, որոնք գերակա են տվյալ պետության ազգային շահերին: Նմանօրինակ ազգային ուղենիշային ծրագրերի բացակայությունն անպայմանորեն իր բացասական ազդեցությունն է թողնելու զարգացման իրավունքի իրականացման արդյունավետության վրա:²

Ջարգացման իրավունքի իրականացման արդյունավետության քննարկման համար առավել կարևոր է վերլուծել զարգացող պետություններին տրամադրվող միջազգային օժանդակության մեխա-

¹ St 'u Isabella D Bunn. The right to development and international economic law, Oxford and Portland, Oregon, 2012, p. 125

² St 'u Khurshid Iqbal. The right to development in international law, Routledge 2012, p. 77:

նիզմները և եղանակները, ինչպես նաև տրամադրվող ֆինանսական օգնության չափերը:

Ջարգացման իրավունքի իրականացման հիմնական գործիք է համարվում Ջարգացման պաշտոնական օժանդակությունը (Official Development Assistance), որն իրականացվում է տնտեսապես զարգացած պետությունների կառավարությունների կողմից և համակարգվում է Ջարգացման օժանդակության կոմիտեի կողմից (Development Assistance Committee): Ջարգացման օժանդակության կոմիտեն ստեղծվել է 1960 թվականին գաղութային համակարգից անկախացած պետությունների զարգացմանը նպաստելու նպատակով և այժմ ունի 29 անդամ պետություն:¹

Ջարգացման պաշտոնական օժանդակության հիմնական նպատակներն են զարգացող երկրներում աղքատության հաղթահարումը, կյանքի համար անվտանգ կենցաղային պայմանների ստեղծումը, բնակչության առողջության պահպանումը, մասնավորապես՝ մարդու իմունային անբավարարության վիրուսի և ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումը, միջազգային տնտեսական գործընթացների մասնակցության ապահովումը, պետությունների ներսում քաղաքացիական ակտիվության նպաստող միջոցառումների իրականացումը և այլն: Նշված նպատակների իրագործման համար թվականին ծախսվել է մեկ միլիարդ ԱՄՆ դոլար, որը մեծամասամբ ուղղվել է աֆրիկյան երկրների զարգացմանը:

Ջարգացման իրավունքի իրականացմանը նպաստելու գործում առանցքային դերակատարում ունի նաև ՄԱԿ-ի Ջարգացման ծրագիրը, որը հաստատվել է ՄԱԿ-ի զարգացման օժանդակության երկու առանձին ծրագրերի միավորման և խոշորացման արդյունքում: Այս ծրագիրը գործում է աշխարհի ավելի քան 117 երկրներ:

¹ St 'u Schachter Oscar, "The evolving international law of development" Dordrecht, Martinus Nijhoff, 1991, p. 56:

րում, և նրա հիմնական նպատակների շարքին են դասվում աղքատության հաղթահարումը, տնտեսական կայուն համակարգի զարգացումը, քաղաքացիական ինստիտուտների ստեղծման խթանումը, միջազգային համագործակցության ակտիվացումը և այլն: Նախորդ տարի ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը նշված նպատակների իրագործման համար ծախսել է հինգ միլիարդ ԱՄՆ դոլար:¹

Զարգացած պետություններից շատերը ունեն առանձին պետական գործակալություններ, որոնք օժանդակում են զարգացման իրավունքի իրականացմանը և խթանում են միջազգային զարգացումը:

Այդորինակ գործակալություններից են ԱՄՆ-ի, Շվեդիայի, Մեծ Բրիտանիայի, Նորվեգիայի միջազգային զարգացման գործակալությունները: Բոլոր թվարկված գործակալությունների կողմից տրամադրված ֆինանսական օգնությունը 2013 թվականին կազմել է 128,8 միլիարդ ԱՄՆ դոլար: Նշված ֆինանսական օժանդակության զգալի մասը տրամադրվել է Աֆղանստանին, Հարավային Սուդանին, Կոնգոյին, Զիմբաբվեին, Բանգլադեշին և զարգացող այլ երկրներին:²

Այս ֆինանսական օժանդակության հետ մեկտեղ վերջին տարիներին կտրուկ աճել է նաև զարգացող երկրների արտաքին պարտքը, որը բնականաբար չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ այդ երկրների տնտեսության հետագա զարգացման վրա: Այսպիսով՝ ինչպես իր՝ «Զարգացման իրավունքը՝ որպես իրավական երևույթ» տեսական վերլուծության մեջ արդարացիորեն նշել է Ա. Մուրավյովը, նշված անհանգստացնող հանգամանքը հակասում է «Զարգացման իրավունքի մասին» հռչակագրի հիմնական նպատակներին և էությանը: Այսպես օրինակ՝ Լատինական Ամերիկայի երկրների արտաքին պարտքը 1980 թվականին կազմում էր,

¹ Տե՛ս www.undp.org:

² Տե՛ս Khurshid Iqbal, *The right to development in international law*, Routledge, 2012, p. 154:

257 միլիարդ ԱՄՆ դոլար, սակայն զարգացման իրավունքի իրականացման շրջանակներում աղքատության հաղթահարման համար ստացված օգնության արդյունքում այն հասել է 607 միլիարդ ԱՄՆ դոլարի, ինչը բնականաբար բացասաբար է ազդել այդ երկրների տնտեսության վրա:¹

Զարգացման իրավունքի իրականացման արդյունավետության բարձրացման համար միջազգային կազմակերպությունների և զարգացած պետությունների կառավարությունների կողմից սկսեցին լայնորեն քննարկվել նշված խնդիրների կանխարգելման միջոցառումների ծրագրեր, որոնք կոչված էին թեթևացնելու զարգացող երկրների արտաքին հսկայական պարտքի գոյացման խնդիրները:

Քննարկվում է խնդրի լուծման երեք տարբերակ՝

- աղքատության մեջ գտնվող պետությունների արտաքին պարտքի ներում
- արտաքին պարտքի վերաֆինանսավորում
- արտաքին պարտքի վճարման ժամանակացույցի և տոկոսագումարների վերանայում:

Զարգացման իրավունքի իրականացման արդյունավետության բարձրացման մեկ այլ մեխանիզմ է առաջարկում ռուս հայտնի իրավագետ Ս. Մասլովան, որն իր՝ «Զարգացման իրավունքը՝ որպես միջազգային իրավունքի նոր սկզբունք» աշխատության մեջ առաջարկել է ստեղծել զարգացման իրավունքի իրականացման նկատմամբ վերահսկողության նոր մեխանիզմ: Նման վերահսկողություն իրականացնող կոմիտեի առկայությունը հնարավորություն կտա գնահատել զարգացման իրավունքի իրականացման արդյունավետությունը և նպատակահարմարությունն առանձին երկրներում: Ս. Մասլովան առաջարկում է նշված միջազգային կոմիտեն ընդգրկել ՄԱԿ-ի կազմում՝ որպես առանձին վերահսկողական մարմին: Առաջարկվում է այդ կոմիտեին օժտել լայն լիազորություններով, ո-

¹ Տե՛ս А.М. Муравьев, *Право на развитие как явление правовых систем*, Москва, 2009, էջ 143:

րոնք թույլ կտան գնահատել զարգացման իրավունքի իրականացման ծրագրերի նպատակահարմարությունը և վերահսկողություն սահմանել առանձին պետությունների կառավարությունների կողմից իրականացված միջոցառումների նկատմամբ՝ ընդհուպ պետական բյուջեի կազմումը և նրա կատարման ընթացքը:¹

Փորձելով եզրափակել զարգացման իրավունքի իրականացման հետ կապված խնդիրների վերլուծությունը՝ կցանկանայինք կատարել հետևյալ եզրահանգումները:

Առաջին՝ զարգացման իրավունքի արդյունավետ իրականացման համար հարկավոր է ներպետական մակարդակով մշակել ազգային բոլոր շահերը ներառող պետական ծրագրեր, որոնց մեջ կներառվեն յուրաքանչյուր առանձին պետության համար գերակա ոլորտները:

Երկրորդ՝ զարգացման իրավունքի իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով հարկավոր է բացառել ստացված ֆինանսական օժանդակություն արդյունքում առավել անբարենպաստ տնտեսական հետևանքների առաջացումը զարգացող պետության համար, ահռելի արտաքին պարտքի կուտակումը: Եվ վերջապես, զարգացման իրավունքի իրագործման արդյունավետ վերահսկողության համար անհրաժեշտ է միջազգային կազմակերպությունների կառուցվածքային բարեփոխությունների իրականացում, որի արդյունքում կարելի է ակնկալել զարգացող երկրների դերակատարման և ակտիվ կենսագործունեության ապահովում:

¹ Տե՛ս Ս.А. Маслова, “Принцип право на развитие в современном международном праве”, Санкт-Петербург, 2003, էջ 88:

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ ПРАВА НА РАЗВИТИЕ

Ани Симонян

Преподаватель кафедры европейского и международного права ЕГУ

Статья посвящена некоторым правовым аспектам реализации права на развитие. Целью статьи является анализ содержания проблем, связанных с реализацией права на развитие, в частности, ее реализации на национальном и международном уровнях. Представлены статистические данные, касающиеся финансовой помощи, предоставляемой развивающимся странам. Предложены некоторые рекомендации относительно повышения эффективности реализации права на развитие.

THE REALIZATION OF THE RIGHT TO DEVELOPMENT: LEGAL PROBLEMS

Ani Smonyan

Lecturer at the YSU Chair of European and International Law

The article is dedicated to the legal problems of the ways and principles for the realization of the right to development. In this article are given reviews regarding conditions, policies and programs on the realization of the right to development as a collective and human right both in national and international levels.

Also a number of general and specific suggestions are introduced for improvement of the strategies of the realization of the right to development.

Բանալի բառեր՝ զարգացման իրավունք, զարգացման իրավունքի իրականացում, զարգացող պետություններին օժանդակություն, ֆինանսական օգնություն, արտաքին պարտք:

Ключевые слова: Право на развитие, реализация права на развитие, развивающиеся страны.

Key words: Right to development, realization of the right to development, developing countries.